

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնի փորձագետ Աշխեն Ալեքսանյանի 2020 թվականի հունիսի 11-ից 2020 թվականի սեպտեմբերի 11-ը աշխատած ժամանակահատվածի համար

Ես՝ Աշխեն Ալեքսանյանս Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնում որպես փորձագետ աշխատում եմ 2019 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N 41 պայմանագրի համաձայն: 2020 թվականի հունիսի 11-ից 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Պատասխանել եմ Պրոբացիայի ծառայությունում ստացված պաշտոնական գրություններին, ինչպես նաև քաղաքացիների, պրոբացիայի շահառուների դիմումներին և բողոքներին:

2. Մասնակցել եմ պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքներին, պրոբացիայի շահառուների համար իրականացրել եմ թարգմանչական (պարսկերեն-հայերեն, հայերեն-պարսկերեն) աշխատանքներ:

3. Մշակել եմ մի շարք հուշագրեր պրոբացիայի շահառուների համար՝ մշակութային և կրթական միջոցառումներին և ծրագրերին մասնակցությունն ապահովելու նպատակով:

4. Մշակել և Պրոբացիայի ծառայության պետի հաստատմանն եմ ներկայացրել պրոբացիայի ոլորտին վերաբերող մի շարք որոշումներ:

Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի  
կազմակերպամեթոդական բաժնի փորձագետ



Աշխեն Ալեքսանյան

14.09.2020թ